Ծ-Խ.

Գրադարանի կառավարչութեան տրուած է	19	
Դպրոցասպատկան կարի կարասիք է դնեալ	64	85
Ուսումնարանի ներքին ծախս .	38	41
Վարժուհւոյն ի ռոճիկ . .	72	20
Գումարն	191	46
Յիշեալ ծախուց գումարը 968 ր. 55 կպ. եկամտէն ի բաց հանելով, մընաց պատրաստի դրամ . . .	777	9

Եկ-մ-ոց յԸնդ-ց 1877 — 78 մ-ց

Անցեալ տարուանից առձեռն պատրաստի դրամ մնացած էր . .	777	9
Ժողովարարի մայր մատեանէն ստորագրութեամբ ստացած է . .	1201	20
Վաճառեալ շաբարից, մոմից, օճառից եւ երկաթից արդիւնք է ստացած	108	16
Տոկոս է ստացած 89 ր. 50 կպ. եւ տարեկան 17 անդամներից ստացած է 169 ր.	256	50
Այլ եւ այլ առիթներով ի նուէր է ստացուած	65	
	2407	95

Ծ-Խ.

Վարժապետի, վարժուհւոյն եւ ծառային ռոճիկ տուած է . . .	232	
Ներքին եւ արտաքին պիտոյից .	50	2
	282	2
Յիշեալ ծախուց գումարը 2407 ր. 95 կպ. եկամտից ի բաց հանելով՝ մընաց ի 20ն Յուլիսի պատրաստի դրամ	2125	93

Հողաբարձուներն այժմ տեղս չգտնուելով, նոցա յանձնարարութեամբ ստորագրեցի,

Հոգաբարձու

ՍՏԵՓԱՆՈՍ ՓԱՀԱՆԱՑ ՏԷՐ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆՑ.

Ի 1878 մ-ի 20ն Յ-ուլ-ի

Ի Լանջաբան.

Ի ՆՈՂՆԵՐԹԻՆ.

Խոմիաքրո-Ընկան Էրաբաբ Ամատքոյ.

Այս օրերս Տփխիսարնակ իշխանուհի Վառվարէ Թարխանեան Բէհրութեանցն՝ ի յիշատակ իւր ընծայեաց իւրեանցակառոյց Նաշխիրգորոյ սուրբ Աստուածածնայ եկեղեցւոյն Հայոց մի ոսկեզօծ արծաթապատ Աւետարան ի սուրբ պատարագի գործադրելոյ համար, մի հատ ընտիր կարած կարմիր մահուտեայ ծածկոց սեղանի, եւ վեց հատ շամադան ապակեայ:

Նոյնպէս միաբանն Սուրբ Ստեփաննոսի կուսանաց անապատի Տփխեաց աւագ սարկաւագուհի Անանա Աղամալեան Խոջամինասեանց ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց ընծայեաց յիշեալ եկեղեցւոյն մի խաչվառ ոսկէզօծ խաչով, մի Ձայնքաղ Շարական մեծ, եւ մի մետաքսեայ շապիկ ի պէտս Դպրաց։

Ուստի բաղցր պարտաւորութիւն ենք համարում յայտնել մեր հրապարակական շնորհակալութիւնը յիշեալ բարեպաշտ նուիրատուաց, մաղթելով սուրբ կոյս Աստուածածնից բարեխօս լինել նախախնամող Աստուծոյ առաջեւը որ նա լինի վարձահատոյց նոցա ըստ ջերմեռանդութեան նոցին աստ եւ ի հանդերձելումն:

Ուստի զայսմանէ ծանուցանելով խմբագրութեանդ խոնարհաբար խնդրեմ հրատարակել տպագրութեամբ յէջս պատուական Արարատիդ ի լուր մերոց ազգայնոց:

ՍԱՐԳԻՍ ՓԱՀԱՆԱՑ ԵՐԻՑԵԱՆՑ.

Ի 25ն Օքտ-ոմ. 1878 մ-ի

Ի Գ. ՆՈՂՆԵՐԻ.

ՆԻԺԵԿՕՐՈԴՈՒ ՏՕՆԱՎԱՃԱՌԻՆ.

Այս տարի տեղւոյս տօնավաճառի առեւտրական գործերը յաջողակ էին, օդը մաքուր, եղանակը պարզ:

Տեղւոյս Հայոց սուրբ եկեղեցւոյ երեցփոխանը պարոն Ղազարոս Դաւթեան Լզեանց եկեղեցական մտից եւ ծախուց գումարաց հաշիւները հարազատութեամբ ներկայացրեց Ժողովրդոց, որոնք վերահասու լինելով պարոն երեցփոխանի հաւատարիմ եւ